

ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայոց լեզուն, իբրև աշխարհի հնագույն լեզուներից մեկը, զարգացել-  
փոփոխվել է հայ ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքին համա-  
պատասխան: Ընդ որում նա անցել է բազմադարյան երկար ու ձիգ ճանա-  
պարհ և այդ ճանապարհին, ինչպես հայտնի է, հաղթահարել է բազմատե-  
սակ դժվարություններ ու արգելքներ և իր հաստատուն գոյությունն է շա-  
րունակում նաև այսօր:

Սիրտորեն կապված լինելով հայ ժողովրդի պատմական կյանքի հետ,  
հայոց լեզուն, ինչպես պարզ հայելու մեջ, արտացոլել է նրանում կատար-  
ված բոլոր փոփոխություններն ու տեղաշարժերը՝ իրենց բազմազան արտա-  
հայտություններով ու դրսևորումներով: Ըստ այդմ էլ՝ և՛ թե հին հայերենը՝  
գրաբարը, և դրան հաջորդող միջին հայերենը համապատասխանել են հայ  
ժողովրդի ավելի վաղ շրջանի կյանքին, ապա նոր հայերենը՝ աշխարհաբարը,  
ուշ շրջանի հասարակական-տնտեսական կյանքին է համապատասխանել,  
արտացոլելով դրանում կատարվող իրողությունները: Իսկ այդ շրջանի ամե-  
նամեծ ու միաժամանակ շատ ծանր իրողությունը այն էր, որ ընդհանուր  
պետականությունից զրկված լինելու և երկու տարբեր տիրապետություննե-  
րի տակ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ հայ ժողովուրդը զրկե-  
ված էր նաև մի ընդհանուր միասնական ազգային գրական լեզու ստեղծե-  
լու հնարավորությունից և հարկադրված էր մեկի փոխարեն երկու գրական  
լեզու ունենալ:

Դրանցից մեկը արևմտահայ գրական լեզուն է, որ ստեղծվել է «կը»  
ճյուղի բարբառների, հիմնականում՝ Պոլսի բարբառի հիման վրա և, ավելի  
շուտ գրական մշակման ենթարկվելով հանդերձ, պատմական յուրատեսակ  
ընթացք և նաև շատ դառն ճակատագիր է ունեցել. իսկ մյուսը արևելահայ  
գրական լեզուն է, որ ստեղծվել է «ռաւմ» ճյուղի բարբառների, հիմնականում՝  
Արարատյան բարբառի հիման վրա և, առավել բարենպաստ պայմաններում  
գտնվելով, զարգացման այլ ընթացք ու ճակատագիր է ունեցել:

Պատմական զարգացման ընթացքով ու ճակատագրով տարբերվելով  
իրարից՝ արևելահայերենն ու արևմտահայերենը մի ընդհանուր լեզվի՝ նոր  
հայերենի երկու ճյուղերն են և, բնականաբար, միևնույն արմատից են սե-  
րում, միևնույն հիմքի վրա են խարսխվում և մի ամբողջություն կազմում:  
Այսպիսով, կարելի է ասել, նրանք ճիշտ և ճիշտ նմանվում են մի հզոր ու  
վիթխարի ծառի, որ կազմված է երկու բարձուղեղ ճյուղերից, որոնցից և ոչ  
մեկն էլ, իհարկե, մյուսի տարբերակը կամ տարատեսակը չէ:

Արևելահայերենը և արևմտահայերենը ո՛չ թե լեզվական երկու տար-  
բերակներ են, ինչպես ոմանք են սխալ կերպով կարծում կամ անվանում,  
այլ նույն լեզվի երկու ճյուղերի մշակված բարձրագույն ձևերը՝ իրենց համա-  
պատասխան օրենքներով ու օրինաչափություններով: Շատ մեծ ընդհանրու-  
թյուններից բացի, նրանք ունեն նաև հնչյունական, քերականական և լեզվա-  
կան այլ տարբերություններ:

Եվ ամենևին պատահական չպետք է համարել, որ նման փորձերը միշտ էլ անհաջողությամբ են պսակվել ու որևէ արդյունք չեն տվել: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե արևելահայ ու արևմտահայ գրական լեզուները տարանջատված են և փոխադարձ բարեբար ազդեցություն չեն կարող ունենալ միմյանց վրա:

Նույն լեզվի երկու ճյուղերի մշակված բարձրագույն ձևերը լինելով՝ արևմտահայ և արևելահայ գրական լեզուները հարկ եղած դեպքում համալրում են իրար, նպաստում միմյանց հարստացմանն ու զարգացմանը: Արևմտահայ գրական լեզվի բառ ու բանից լավագույնս է օգտվել, օրինակ, վահրամ ֆափազյանը՝ հատկապես իր «Հետադարձ հայացք» գրքում, իսկ արևելահայ գրական լեզվին հատուկ մի շարք բառեր ու ձևեր է, ասենք, շատ տեղին գործածել արևմտահայ նշանավոր գրող Համաստեղը իր ստեղծագործություններում: Եվ երկու դեպքում՝ թե՛ արևմտահայերենին, թե՛ արևելահայերենին բնորոշ լեզվական տարրերը, բառերն ու ձևերը ոչ թե հենց այնպես՝ տարեբայնորեն, այլ գիտակցաբար, որոշակի նպատակամղմամբ են գործածվում:

Ոմանք, սակայն, անտեսելով այդ և նկատի չունենալով երկու հայ գրական լեզուների ո՛չ պատմական զարգացման ընթացքը, ո՛չ հայ ժողովրդի հասարակական կյանքում նրանց ունեցած առանձնահատուկ դերն ու տեսակարար կշիռը, ո՛չ նրանց առանձնահատկություններն ու առաջադրած պահանջները, արևելահայ գրական լեզուն արևմտահայ գրական լեզվին ենթարկեցնելու փորձեր են անում, գործածելով ամենից առաջ այնպիսի բառեր, որոնց կարիքը նա բնավ չի զգում:

Այսպես՝ հայտնի է, որ բազմազան բաների ու առարկաների, հրատափելով ու պարզեցնելով արևելահայերենը՝ համար (արևելահայերենը) համար (նոսեր); իսկ արևմտահայերենը թիվ բառն է գործածում: Երկուսն էլ հայերեն բառեր են և պատշաճորեն են կատարում իրենց դերը: Բայց ահա հայտնվել են մարդիկ, որոնք, չգիտես ինչու՞ և ի՞նչ իրավունքով, արշավի են ելել համար-ի դեմ և փոխարենը հատկապես մամուլում թիվ են գործածում, ինչպես, օրինակ՝ «Մեր թերթի թիվ 12 համարում» («») «Հայ մտավորական կին» խորհուրդն ... հրավիրում էր ցանկացողներին մասնակցել մայիսի մեկին ոսկու հանձնման իրենց արարողությանը» («Առաջատար», մայիս, թիվ 14, 1992), «Հայ գրող, 22 մայիսի 1992 թ., թիվ 7 (35), «Մայիսի 26-ին նախարարների խորհրդի շենքի առջև էին հավաքվել Ադի հանքի թիվ 267 ավտոշարասյան վարորդները» («Երկիր», 99, 27 մայիսի 1992), «Համալսարանը Մոսկվայի թիվ 1276 դպրոցում բացում է հումանիտար համալսարան» («Երեկոյան Երևան», 1992, թիվ 87) և այլն:

Եվ կամ՝ դարձյալ ստրկամտորեն հետևելով արևմտահայերենին և առավելությունը տալով նրան՝ այդպես վարվողները մերժում են նաև արևելահայերենում սովորական գործածություն ունեցող այնպիսի բառեր, ինչպիսիք են, ասենք, դիսկոտեղիս, նավթ, կինո, տաճիկ, ռադիո, անսամբլ, շախմատ, պոմիդոր, բունկ, ավտոմեքենա և այլն, և փոխարենը պահանջում են գործածել ու գործ են ածում թեզ, ֆուրյուր, շաքժանկար, շաքժապատկար, նախաշար, ձայնասփյուռ, նատուկ, լուրիկ, դաժնատուն, ինֆնաշար:

Այս և նման փաստերը վկայում են, որ վերջին ժամանակներում մեզանում իրոք խիստ զուլի է բարձրացրել ծայրահեղ մաքրամոլությունը՝ պուրիզմը, որ, ինչպես հայտնի է, միշտ մերժել-դատապարտել է լեզվաբանական գիտությունը, նշելով, որ փոխառությունը անխուսափելի երեվոյթ է, և փոխառնելի են այն բառերը, որոնք անթարգմանելի են և առավելագույնս ճիշտ են արտահայտում համապատասխան իմաստը:

Եվ հետևաբար՝ արևելահայ գրական լեզվին որևէ նպաստ չեն բերում բոլոր նրանք, ովքեր, ասենք, լատիններենից սերող, միջազգային բնույթի դիսկոտեղիս (աքննություն, հետազոտություն) բառի փոխարեն թեզ են

դործածում, որ, ի դեպ, ծագում է մի այլ օտար լեզվի՝ հունարենի թեզիս բառից և արևելահայերենում «դրույթ, հիմնադրույթ» է նշանակում, ովքեր անսամբլ-ի փոխարեն համույթ են գործածում, որ բացարձակապես շինծու բառ է և ամեն մեկին չէ, որ հասկանալի է, ովքեր պսիխոլոգ-ը լուկ-ով են փոխարինում, որ «կը» ճյուղի որոշ բարբառների հատուկ բառ է և արևելահայերենում տարածվել ու ընդհանրանալ չի կարող:

Մի ամբողջ խառնաշփոթ է տիրում հատկապես ներկայիս շատ թերթերի և առհասարակ պարբերական մամուլի լեզվում: Նրանցում ոչ միայն այդպիսի, այլև շատ շինծու ու արհեստական բառեր են գործածվում. անաստված կերպով շարչարկվում է մանավանդ -ույթ գոյականակերտ ածանցը, և ընթերցողներին են հրամցվում նրանով կազմված խմբագրույթ, բազմույթ, բաժանույթ, իմույթ, իրույթ և նման մի շարք այլ բառեր, որոնցով լեզուն փաստորեն խճողվում ու զրկվում է կենդանի հմայքից:

Բայց սա էլ իր հերթին ցույց է տալիս, որ լեզվամշակման ու լեզվաշինական աշխատանքը որքան բարդ ու դժվարին, այնքան էլ լուրջ ու պատասխանատու աշխատանք է, որ մի կողմից եթե խիստ հոգացողություն է պահանջում լեզվի նկատմամբ, ապա մյուս կողմից՝ մերժելի է դարձնում ամեն մի կամայականություն ու անհիմն նորամուծություն:

Այստեղից էլ հետևում է, որ արևմտահայերենին հատուկ այն բառերն ու արտահայտություններն են նպաստ բերում արևելահայ գրական լեզվին, որոնց կարիքը զգացվում է, և կամ՝ որոնք գործածվում են անհրաժեշտաբար և հարստացնում են նրա իմաստաբանական կազմը: Եվ, ընդհակառակն, այն բառերն ու արտահայտությունները, որոնց դիմաց արևելահայ գրական լեզուն իր սեփական, ընդհանրացած բառերն ունի, ինքնին անտեղի են ու մերժելի:

Պահանջվում է գիտակցված ու ճիշտ քաղաքականություն վարել օտար փոխառությունների դեպքում: Բառափոխառությունը, ինչպես հայտնի է, համընդհանուր երևույթ է, և աշխարհում չկա որևէ լեզու, որ փոխառություն չունենա: Հայտնի է նաև, որ դա կատարվում է անհրաժեշտաբար, ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքի առաջադրած պահանջով: Իրողությունը ժամանակին այդպես է մեկնաբանել, օրինակ, Մ. Նալբանդյանը՝ նշելով, որ լեզուների համար փոխառելի են այն բառերը, որոնք «ենոր քաղաքակրթության արդյունք են», «ամենօրվա կյանքի, պետքերի և հասկացությունների հայտարար»<sup>1</sup>. Նույնն է հավաստել Հովհ. Թումանյանը՝ ասելով. «Թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոխառությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ փեղսցի է, որ էդպես է, միայն թե պետք է իմանալ շնորհեով, խելացի առնել և տեղը գործածել...»<sup>2</sup>. Հր. Աճառյանի հաստատմամբ էլ՝ «Ոչ մի դեպքում ոչ մի լեզու կատարելապես անկախ ու անջատ չէ մյուսներից»<sup>3</sup>, «Երբ մի ազդ մի ուրիշ ազգի լեզվից բառեր է փոխառում, առնում է այնպիսի բառեր, որոնք իր կուլտուրական կյանքի որևէ պահանջը լրացնում են»<sup>4</sup>:

Պետք է ասել, որ այս ամենը նույնպես անտեսվում է, և ներկայիս ամենաթողություն ու ամենաթողություն պայմաններում կատարյալ խառնաշփոթություն է ստեղծվել նաև փոխառությունների բնագավառում: Նկատելի է, որ ոմանք մաքրամոլության մարմաշով տարված՝ աշխատում կամ ձգտում են ամեն ինչ թարգմանել ու «հայացնել», ոմանք էլ, ընդհակառակն, իրերի միջև խտրություն չեն դնում և տեղին թե անտեղի փոխառյալ բառեր են գործածում:

<sup>1</sup> Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու. Երևան, 1948, էջ 195:

<sup>2</sup> Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. Կ. 4, Երևան, 1951, էջ 121:

<sup>3</sup> Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. I մաս, Երևան, 1941, էջ 28:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 214:

Արդյունքում ստացվում է այնպես, որ մի կողմից լեզուն հեղեղվում է կեղծ ու շինծու բառերով, իսկ մյուս կողմից՝ մի շարք այնպիսի օտար բառեր են գործածվում, որոնց համար հայերենը իր գեղեցիկ համարժեքներն ունի, ինչպես՝ արգումենտ—փաստարկ, պլյուրալիզմ—բազմակարծարյուն, գլորալ—ընդհանուր, համընդհանուր, նեգատիվ—բացասական, սիստեմ—համակարգ, ինտելիգենցիա—մտավորականություն, ցինիկ—լիաի. ոնցիոն—ապաքինություն, ապաքինություն, ֆորում—համաժողով և այլն:

Նկատելի է նաև, որ առանձին նախապատվություն է տրվում եվրոպական լեզուներից ուղղակիորեն կատարվող փոխառություններին, և գործ են ծածկում մի շարք այնպիսի բառեր, ինչպես՝ մենեջեր, համբուրգեր, բրիջ, սպիկեր, շոու, սքրեն, տեստ և այլն, որոնք նույնպես կարող են արտահայտվել հայերեն համարժեքներով:

Մեր լեզվին, սակայն, ոչ միայն անտեղի ու անհարկի բառափոխառությունները, այլև քերականական-շարահյուսական բնույթի օտարաբանություններն են զգալի վնաս պատճառում: Անժխտելի է, որ, օրինակ, այն հաճախ է խեղճվում ռուսաբանություններով, ռուսերենից ուղղակիորեն կատարված անհրաժեշտ լեզվաբանություններով ու պատճենումներով, հայ մտածողությունը լեզվի արտահայտություններով ու նախադասություններով: Գնալով լայն տարածում են գտնում, օրինակ, «խոսքը գնում է այն մասին», «խոսքը գնաց այն մասին», «խոսքը գնաց նիսար երկու մասն հետաձգելու մասին», «խոսքը գնում էր Ռաֆու-Փոքրի հավաքմանը կապից՝ լույս մասին» և նման արտահայտություններ, որոնք ռուսերենի «речь идет о том», «речь шла о том» ձևերից են ձևավորված և ենթակա են մերժման:

Այդպես և հաճախ ռուսերենի ազդեցությամբ խախտվում են կապի ու նրա լոնգի, բայերի լոնգրաբություն, բառերի կապակցություն ու մի շարք այլ կանոններ և հնչվում այնպիսի արտահայտություններ՝ «ԲՆԱԿԻՉՆԻՒ ՄՈՏ» այն մասով խախտված կա...», «Հալոցեր ինչ անաչացել ու միայն ԽՄ ՄՈՏ», «Թող հալոց ՄՈՏ նշումներ լան», «խախտումները կախված են եղել ՆՐԱ ՀՆՏ», «Վաղը մեզ կհանդիպենք ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՏ» և այլն:

Անշուշտ, հայերեն չեն նաև «առագայություն է հավաքում», «նախադարձ իր մաս է», «հաշվառում է կանգնած», «կիսվել մեկի հետ» և նման այլ արտահայտություններ, որ գերազանցապես դործածում են գրագետ մարդիկ՝ իրենց ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ գրաբարն է շարաշահվում, և ոմանք պարզապես իրենց «գրաբարախմբությունը» ցուցադրելու համար գրաբարյան անհատիկ ձևեր են օգտագործում, ինչպես, օրինակ՝ մամլո, գործոց, պալմանավ և այլն:

Գրաբարը, ինչպես հայտնի է, եղել է և է՝ հայ նոր գրական լեզվի հարստացման ու զարգացման կարևորագույն աղբյուրներից մեկը: Բայց սա չի նշանակում, թե գրաբարյան ամեն ինչ կարելի է փոխառնել ու գործածել այսօր: Ինչպես ժամանակին Մ. Նալբանդյանն է մատնանշել, գրաբարից կենդանի գրական լեզվին պիտի անցնեն այն տարրերն ու բառերը, որոնք անհրաժեշտ են և կյանքի են կոչվում նրա պահանջով: Ընդ որում դրանք անպայման պետք է համապատասխանեն փորձող քերականական օրենքներին և կիրառվեն այնպես, որ «ժողովրդին միանգամայն դյուրամարս լինեն»: Այլապես լեզուն կարող է ինչ-որ շահով տուժել և զրկվել իր իսկ միջոցներով զարգանալու ինչ-ինչ հնարավորություններից:

Ժամանակակից հայ գրական լեզվին, նրա հարստացմանն ու զարգացմանը ոչնչով չի նպաստում նաև բարբառամիտությունը: Իր պատմության ողջ ընթացքում, որ դարձյալ հայտնի է, հայ նոր գրական լեզուն միշտ էլ օգտվել է բարբառներից, ներառել իր մեջ նրանց էական տարրերը: Բարբառները այսօր էլ, անշուշտ, շարունակում են հայ նոր գրական լեզվի

հարստացման ու ճոխացման աղբյուր ծառայել, և մի շարք գրողներ ու բանաստեղծներ նրանց բառ ու բանի, անթեղված գանձերի վարպետ գործածություններով լիովին այդ են հաստատում:

Մարդիկ կան, սակայն, որ ճիշտ չեն ըմբռնում հայ գրական լեզվի համար հայ բարբառների ունեցած իրական դերն ու նշանակությունը, այն դրանց ստորադասելու փորձեր են անում և պահանջում գործածել բարբառային այնպիսի ձևեր, որոնք ոչ միայն ընդհանրական արժեք չունեն, այլև ուղղախոսական աղճատումներ են առաջ բերում ու վնասում:

Ոչ հեռավոր անցյալում «Գարուն» հանդեսում (1983 թ., № 1) հրապարակված՝ «Բանահյուսություն, բարբառ, արդիականություն» դուրագրավ վերնագիրը կրող մի հոդվածում, որի հեղինակն է մոնոգոնի կեցվածքով ամենուր խառնակություն առաջ բերող Ռ. Իշխանյանը, այն տեսակետն է բարոզվում, թե իբր «զուտ գրական լեզուն կենցաղի լեզու չի կարող դառնալ, այն բանավոր գործածվում է միայն զեկուցումների և պաշտոնական այլ ելույթների ժամանակ»։ Այնտեղ ներբողվում են բարբառայնությունն ու հասարակաբանությունը, և, ընդհակառակն, պարսպվում-նսեմացվում է գրական լեզուն. մի քաղաքականություն, որ (թող զարմանալի չլի) ձգվում-հասնում է մինչև մեր ներկա օրերը: «Երկիր» թերթի 1992 թ. ապրիլի 10-ի, 11-ի և 14-ի համարներում «Արևելահայ գրական լեզվի ներկա վիճակը» խորագրով մի ծավալուն հոդված է տպագրել, որտեղ մի կողմից եթե միանգամայն անհիմն կերպով քարկոծվում է արևելահայ գրական լեզուն, սխալ ու մերժելի համարվում նրա՝ դարերով սրբագործված մի շարք քերականական իրողությունները, ապա մյուս կողմից՝ «փառաբանվում է» բարբառը և պահանջվում խոսակցական գրեթե առաջնորդվել նրանով կամ մինչև իսկ՝ փողոցի լեզվով:

Հայոց լեզվի ընդհանուր դրություն և ուղղախոսության վրա, անշուշտ, բացասական ազդեցություն են թողնում նաև այլ հանգամանքներ: Պետք է հատկապես նշել, որ քերականությունը բավարար չափով չի ծառայեցվում իր բուն՝ ուղիղ խոսակցական և գրեթե նպատակին: Եվ հենց այդ պատճառով շատերի լեզվում կամ խոսքում իրոք զգալի տեղ են բռնում հայոց լեզվի քերականական կանոնները չիմանալուց բխող կամ պարզապես՝ քերականական բնույթի սխալներն ու աղավաղումները:

Վերջին շրջանում ոմանք քամահրանքով են խոսում քերականության, նրա գործնական դերի ու նշանակության մասին և բանն էլ այնպես են ներկայացնում, թե իբր առանց քերականության բավարար իմացության կարելի է խոսել մաքուր ու անաղարտ գրական լեզվով: Այնինչ իրական հենց նման պակասով պետք է բացատրել, որ շատ-շատերը, օրինակ, գործնականում չեն կիրառում ենթակայի և ստորոգյալի համաձայնության տարրական, բայց պարտադիր կանոնը, և, մանավանդ, եթե ստորոգյալը կրավորական սեռի բայով է արտահայտվում, հոգնակի թվով ենթակայի հետ հոգնակի փոխարեն այն եզակի ձևով են գործածում. ինչպես՝ «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների նմուշները սխառապատվում է տպագրության» («Հայք», № 20, 26 մայիսի 1992), «Խերմուռ գյուղում դեռևս պահպանվել է հրասայլերի խրամատները», «Կյանքում շատ փոփոխություններ է կատարվել», «Անհավասար պայմաններ է ստեղծվել», «Այլ գործողություններ չի առձուլագրվել»... (նույն տեղում), «Գեղարդում ևս նրանց հետաքրքրում էր հայ մարդը, նրա ներշնչականի» (հ) առձուլները...» («Հայություն», 1992, 3 ապրիլի, № 4) և այլն:

Եվ կամ՝ հայտնի է, որ գրական լեզվում մի շարք կապեր՝ մոտ, հա՛մա, պես, հետ, վրա և այլն, անձնական դերանունների հետ գործածվելիս ոչ թե սեռականաձև, այլ տրականաձև խնդիր են առնում<sup>5</sup>, բայց դար-

<sup>5</sup> Այդ մասին տե՛ս մեր՝ Արդի Հայերենի կապերը. Երևան, 1955, էջ 48—50:

ձյալ շատերը խախտում են նաև այդ կանոնը և, ասենք, ինձ մոտ, ինձ համար, ինձ պես, մեզ հետ, քեզ վրա, ձեզ պես, ձեզ համար, ձեզ մոտ և այլ ձևերի փոխարեն գործածում են մերժելի ձևեր, ինչպես՝ «Մենք էլ թերևս անընդհատ զարմանում ենք մեր վրա...» «Քո հետ խոսել չի լինում», «Իմ վրա նա լավ տպավորություն է թողել», «Ձեր համար նա շատ բան է արել» և այլն:

Նկատելի է նաև հակառակ երևույթը. ինքը անձնական դերանվան իր ձևի (օրինակ՝ Ի՞մ քննցվածքը, Ի՞մ տունը, Ի՞մ մասին և այլն) փոխարեն շատերն էլ գործածում են իրեն, չգալով, որ դրանով ուղղախոսական խախտում են կատարում, ինչպես՝ «Վերջացրեց իրեն աշխատանքը», «Թող նա իրեն խոսքն ասի», «Հանձնաժողովն իրեն կայացրած որոշումը շուտով կհրապարակի» և այլն:

Հայերենի ուղղախոսությունը, սակայն, առավել մեծ չափով խաթարված ենք տեսնում բայական մի շարք սխալ կամ մերժելի ձևերի գործածությամբ: Այդպիսիք են, օրինակ, շատ սովորական ասել բայի անցյալ կատարյալի ԿԵՆԱՅ ՀԻՄՔՈ՛՛՛ կաշմված ասացի—ասացի՜նք, ասացիք—ասացի՜ք, ասաց—ասացի՜նք կանոնարկված ձևերի փոխարեն, որ կապվում են հին հայերենի՝ քրաբարի հետ, հաճախաբար գործածվող ասացի—ասացի՜նք, ասացիք—ասացի՜ք, ասաց—ասացի՜նք ձևերը, ինչպես՝ «Ես մի անգամ ասացի», «Դուք մի նոր բան շասացի՜ք», «Դու այդ մասին արդեն ասացիք» և այլն:

Նմանապես՝ ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում լայն տարածում է գտել պատճառական բայերի (օրինակ՝ սովորեցնել, խոսեցնել, հասկացնել, ներկայացնել և այլն) անցյալ կատարյալի կարճ ու կանոնարկված ձևերի (ինչպես՝ խոսեցրի—խոսեցրի՜նք, խոսեցրիք—խոսեցրի՜ք, խոսեցրի՜ք—խոսեցրի՜ք, ներկայացրի—ներկայացրի՜նք, ներկայացրիք—ներկայացրի՜ք, ներկայացրեց—ներկայացրի՜նք) փոխարեն՝ դրանց երկար և բոլոր դեպքերում մերժելի ձևերի (ինչպես՝ խոսեցրեցի—խոսեցրեցի՜նք, խոսեցրեցիք—խոսեցրեցի՜ք, խոսեցրեց—խոսեցրեցի՜նք և այլն) գործածությունը:

Այստեղ էլ նշենք, որ մանավանդ երիտասարդների և որոշ մարդկանց շրջանում դեհեկորեն աղճատման է ենթարկվում նույն պատճառական բայերի եզակի հրամայականը և, օրինակ, հանգցրո՛ւ, միացրո՛ւ, խոսեցրո՛ւ, ներկայացրո՛ւ, քննցրո՛ւ և այլն գրական ու կանոնավոր ձևերի փոխարեն գործածվում հա՛նգցրա, միա՛ցրա, խոսե՛ցրա, ներկայա՛ցրա, քննե՛ցրա խժալուր ու ժարգոնային ձևերը:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ եղանակավորիչ բայերի (ուզել, կամենալ, ցանկանալ, կարողանալ և այլն) հետ բաղադրյալ ստորոգյալ կազմող անորոշ դերբայը, դրական լեզվի օրենքներին հակառակ, ուղիղ ձևի փոխարեն դիմավոր ձևով է գործածվում, ինչպես՝ «Ես ուզում եմ սնդուկադառնալ այդ հարցին», «Դու ուզում ես խոսել», «Նա ցանկանում է ելույթ ունենալ», «Կարող է գալ» և այլն:

Քերականական բնույթի սխալներն ու խաթարումները, հարկավ, այս ամենով չեն ավարտվում: Շատ-շատերը չեն կարողանում իրենց մտքերն արտահայտել շարժ ու հստակ, տրամաբանորեն ճիշտ կառուցված նախադասություններով, կատարում են շարահյուսական կարգի բազմազան սխալներ և ավելի շատ ոչ թե հայերեն, այլ, ինչպես ընդունված է ասել «միթոսներեն» են խոսում: Նկատելի է, որ այդպիսի դեպքերում էլ մեծ մասամբ շարժվում է, որպեսզի ստորադասական շաղկապը, գործածվելով այնպիսի նախադասություններում, սրունցում բնավ նպատակային հարաբերություն չի արտահայտում. ինչպես, օրինակ՝ «Ովքեր են համաձայն, որպեսզի հարցը քննարկման որվի», «Խնդրում եմ, որպեսզի մեր իսկ ընդունած որոշումը կատարվի», «Անհրաժեշտ է, որպեսզի կարգ ու կանոն լինի», «Մենք գտնում ենք, որպեսզի հանձնաժողովը մեկը լինի» և այլն:

Հայ դրական լեզվի ուղղախոսությունը հաճախ լաթարվում է նաև բառերի սխալ կամ ոչ տեղին գործածությամբ: Այսպես՝ մարդիկ կան, որ, օրինակ, շտարբերելով վերաբերել և վերաբերվել հարանուն բառերը և լիմտնալով, որ վերաբերել չէին, հարանուն է օգտագործել, կամ՝ առնչություն ունենալ, իսկ վերաբերվել՝ անբաժանունը ցույց տալ, որն է բանի նկատմամբ որի է կերպը լիարժեք, դրանք շփոթում են և առնչների գնահատման վերջին ձևն են գործածում, օրինակ՝ ժենյ վերաբերվում է այն բանին, «նսածըս բեղ շի վերաբերվում», «մերշումը այդ խնդրին չի վերաբերվում» և այլն:

Մարդիկ էլ կան, որոնք չգիտեն, որ վաղաբեկել, վաղաբեկում բառերը կապվում են վաղ (տեղի տեղություն, պատիվ) և վաղաբեկաբան հետ և բրանո ընդհանում են վաղաբեկել, վաղաբեկում, որպես բառեր, սակայն, հայերենում գոյություն չունեն:

Այդպես և գրական լեզվի կանոնների, անադարտության դեմ են մեղանում բոլոր նրանք, որոնք, ասենք, չգիտենալով հոգում, շնորհիվ, քնտուրեկով, և զորու, մեծավ մասամբ, այսուհետև, փնտառով, փնտառությամբ, նախագահ և այլն բառերի կազմությունը կամ առաջացումը, դրանք գործածում են ի օգուտ կամ ի հոգում, ի շնորհիվ, քնտառախան, գառու, մեծամասնաբար, այսուհետ, փնտառով, փնտառությամբ, նախագահ ... սխալ կամ մերժելի ձևերով:

Հայերենի ինչպես ուղղախոսության, այնպես էլ նրա ընդհանուր վիճակի վրա պակաս բացասական ազդեցություն չի թողնում նաև ուղղագրություն ընդհանրապես ստեղծված խառնաշփոթը: Հակառակ այն անհրեքների հիմնավորումների, որ հայերենի ուղղագրության բարեփոխությունը կատարվի է անհրաժեշտաբար և իր հարուստ նախապատմությունը ունի, որ միասնական ուղղագրությամբ առաջնորդվելը բխում է ժամանակակից հայոց լեզվի շահերից և պետք է կիրառվի անշեղորեն, շատերը շարունակում են թիթեղամտորեն վերաբերվել ուղղագրությանը, շարունակում են խախտել նրա կանոնները և զանազան ավերածություններ գործել: Որոշ թերթեր, ի նշան իրրի թի հետագայում հին ուղղագրության վերականգնման, իրենց սկզբնատողներ ու վերջնատողները ընթերցողներին են հրամայում նրանով, իսկ մնացած ընթերցողները առաջնորդվում են այսօրվա ուղղագրությամբ:

Այսպես և թերթեր, լրագրականներ կան, որոնք ամեն կերպ ջանում են հայերենի այբուբենում և ուղղագրության մեջ վերականգնել և տալով վրանոր կամ հյունը, որ վաղուց է կորցրել իր հնչյունային արժեքը և դուրս մղվել նրա հնչյունական համակարգից: Եվ, որ ավելի դավաճանական է, դա արվում է միայն մի՝ Լ-ի գործածության դեպքում, ինչպես՝ երևանում, միջոցով, Գեորգյան, Նանու, կառնառ, այնուհետև և այլն: Այսպիսով, մյուս կողմից էլ, միանգամայն անհիմն կերպով, մերժվում է և նշանագիրը, որ, ինչպես հայտնի է, ստեղծվել է վաղ ժամանակներում և հավանության արժանալով, ասենք, Մխիթարյան միաբանության շատ նրախափորներով կողմից՝ գործածվել մի այնպիսի կոթողային աշխատության մեջ, ինչպիսին նոր հայկազյան բառարանն է:

Նկատելի է, որ մի շարք թերթեր ու պարբերականներ էլ (օրինակ՝ «Մայրենի» հանդեսը) հողվածներ են տպագրում խառն ձևով՝ թե՛ ներկայիս և թե՛ հին կամ ավանդական ուղղագրությամբ, կամենալով ըստ երեւոյթին ցույց տալ վերջինիս «առնչվելությունը» առաջինի նկատմամբ: Այսօրինակ ըստ, աստի, փնտառով վնասում է ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության միասնականությանը և նրա կանոնների պարտադիր ու անշեղ կիրառմանը:

Հարկավոր է մեկընդմիջտ հիշել, որ ինչպես հին՝ ավանդական, այնպես էլ նոր՝ բարեփոխված ուղղագրությունը մշակութային հարստություն ու նվաճում է. այն լիովին համապատասխանում է արևելահայ գրական լեզվի ոգուն ու էությանը, լավագույնս է ծառայում իր բուն նպատակին, և

հետևաբար՝ նրա դեմ տարբեր հղանակներով տարվող պայքարը ինքնին անտեղի է ու մերժելի:

Այս ամենն էլ ցույց է տալիս, որ հայոց լեզուն այսօր իրոք այնքան էլ բարվոք վիճակում չէ, և կան մի շարք կնճռոտ հարցեր, որոնք հայագիտական կենտրոնների առջև ծառանալով՝ համապատասխան լուծում են պահանջում: Հայոց լեզվի ամբիոնները, ՀԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը պետք է ավելի շատ զբաղվեն տերմինաբանության-տերմինաշինության, բառարանագրության, ուղղախոսության, ուղղագրության և գործնական կարևորություն ունեցող այլ հարցերով ու նրանց բարելավմամբ:

Եվ բոլորովին էլ պատահական չպետք է համարել, որ աններելի կերպով ետ է մնում հայ բառարանագրությունը, ինքնահոսի են մատնված տերմինաշինական աշխատանքները և կատարյալ քառս է տիրում հատկապես մամուլի լեզվում, անհիմն ու անտեղի մերժվում են քերականական մի շարք իրողություններ ու հասկացություններ, հակառակ դրան՝ զանազան մտացածին ու կամայական առաջարկություններ են արվում: Հայոց լեզվի դպրոցական ծրագրում, օրինակ, պահանջ է դրվում՝ վերափոխել խոսքի մասերի ընդունված կարգը, երկրորդական կոչված խոսքի մասերը (կապ, շաղկապ և այլն) վտարել ձևաբանությունից, հիմնավորապես մերժել սեռական ու հայցական հոլովները...

Ավելացնենք նաև, որ ինչպես որոշ դասագրքերում ու ձեռնարկներում, այնպես էլ մի շարք ուսումնասիրություններում շարունակվում է աղճատ ներկայացվել բայական խոսքի մասը. սահմանական հղանակի հարակատարն ու անցյալի հարակատարը ժամանակներ չեն համարվում, բայական ցերեկանական ժամանակները բայաձևեր են անվանվում, դերբայները աշակերտներին այնպիսի հաջորդականությամբ են հրամցվում, որ իմաստով ու կառուցվածքով իրար հետ սերտորեն չեն շաղկապվում և, բնականաբար, հեշտորեն չէ, որ ուսուցանվում են ու յուրացվում:

Պարզ է, որ այս ամենի կողքով չի կարելի անտարբերությամբ անցնել, և հայադիտության խնդիրներից մեկը պետք է լինի՝ հայոց լեզուն զերծ պահել զանազան տեսակի աղավաղումներից՝ ու խաթարումներից և ըստ ամենայնի նպաստել նրա բնականոն զարգացմանն ու առաջընթացին: